# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 5 | Դեկտեմբեր | 2018 թ. | Բ | 7926665495 |

| [4] Առաքման ամսաթիվ | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|---|---|---|
| 5 | Դեկտեմբեր | 2018 թ. | Սերիա | Համար |
| | | | | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձ

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ; N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն; N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: ; Լիազորագիր — Համար: ; Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| I | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 71161618 բ/գ, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

| | | | |
|---|---|---|---|
| Առաքող՝ | KALANTARYAN GAYANE<br>7203510093<br>(անունը, ազգանունը) | Ստացող | (անունը, ազգանունը) |

05/12/2018 13:49:55

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

31 հոկտեմբերի, 2018 թ.

ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Լ.Բ Պառավյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 71161618 քրեական գործի նյութերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Ս/թ սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14:30-ին, Վանաձորի բժշկական կենտրոնից ՀՀ ոստի կանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում ահազանգ ստացվել, որ գլխի ծոծրակային շրջանի պատռած վերք, աջ ակնակապիճի, ձախ թիակի, ա ազդրի ծակած-կտրած վերքեր, աջ ձեռքի 5-րդ մատի ամպուտացիայով իրենց մոտ է տեղափոխե Վանաձոր քաղաքի Աղայան 65/9 բն բնակիչ Գնել Հակոբի Մարտիրոսյանը: Նույն օրը ս/թ սեպ տեմբերի 16-ին Գնել Մարտիրոսյանը տվել է հաղորդում, այնուհետև բացատրություն այն մասին որ ս/թ սեպտեմբերի 16-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի թիվ 23 հիմնակա դպրոցի մոտ ծեծի է ենթարկվել անծանոթ տղամարդու կողմից:

Նյութերի նախապատրաստման ընթացքում փաստական տվյալներ են ստացվել առ այն, ո ս/թ սեպտեմբերի 16-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի քաղաքի Իսահակյան նրբ.7շենքի 26 բնակարանում Լոռու մարզի Վահագնի գյուղի 7փ, 28 բնակարանի բնակի Արմենակ Վիգենի Թեմուրյանն անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքու դիտավորությամբ ձեռքերով, ոտքերով, դանակով, մետաղական սրճեփով, լուսամփոփու բազմաթիվ հարվածներ է հասցրել Գնել Մարտիրոսյանի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ Գնել Մարտիրոսյանի մարմնակա վնասվածքները՝ ըստ բժշկական փաստաթղթերի տվյալների գլխի ծոծրակային շրջանի, աջ ակնակապիճի շրջանի սալջարդ վերքերը՝ ուղեկցված աջից քունքոսկրի մախաթաձև ելուն կոտրվածքով, ձախից ճակատային բլթի կոնտուզիոն օջախով և գլխուղեղի ցնցումով, ինչպես նաև ձախ ուսագոտու շրջանի սալջարդ վերքը ուղեկցված արյունակույտով, հասցվել են բութ, կոշտ առարկաներով, իսկ աջ դաստակի 5-րդ մատի կտրած վերքը եղնգային ֆալանգի տրավմատիկ ամպուտացիով և աջ ազդրի վերին երրորդի կողմնային մակերեսի ծակած-կտրած վերքը հասցվել են սուր ծակող կտրող գործիք/ներ/ով, հնարավոր է դանակով, հնարավոր է գործի հանգամանքներում, նշված ժամկետում և պայմաններում, որոնք համակցության մեջ վերցրած պատճառել են առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության ԼՄ վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին:

2018 թվականի սեպտեմբերի 20-ին քրեական գործն ստացվել է Լոռու մարզային քննչական վարչություն և ընդունվել վարույթ:

Վերոհիշյալ հանցանքը կատարելու կասկածանքով 2018 թվականի սեպտեմբերի 20-ին՝ 11:44-ին Արմենակ Թեմուրյանը ձերբակալվել է:

2018 թվականի սեպտեմբերի 22-ին Արմենակ Թեմուրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2018 թվականի սեպտեմբերի 22-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջի ատյանի դատարանի կողմից որոշում է կայացվել մեղադրյալ Արմենակ Թեմուրյան կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությու բավարարելու մասին և նույն օրը նա տեղափոխվել է «Վանաձոր» ՔԿ հիմնարկ:

Նկատի ունենալով, որ Արմենակ Թեմուրյանի հոգեկան վիճակի և քրեական գործով կարևո նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատակա հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կե տի, 243-244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննու-թյու որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր ՊՓԲԸ փորձագետներին:

2. Փորձագետներին ներկայացնել մեղադրյալ Արմենակ Թեմուրյանին, իսկ քրեական գործ նյութերը և փորձաքննության լիարժեքության ապահովման համար անհրաժեշտ այլ փաստաթ թերը կտրամադրվեն փորձաքննության ընթացքում:

3. Փորձագետներին պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

- Արմենակ Թեմուրյանի մոտ նախկինում, դեպքի ժամանակ և ներկայումս առկա՞ է արդյո որևէ քրոնիկ հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարու տկարամտություն կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակ, թե՞ ոչ,
- · եթե Արմենակ Թեմուրյանը հանցագործությունը կատարելու պահին տառապել է հոգեկա հիվանդությամբ կամ գտնվել է ժամանակավոր հոգեկան խանգարման մեջ, ապա հիվանդությու նը կամ վիճակը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողությունների բնույթը գիտակցելու, այդ գործո ղությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, թե՞ ոչ, հա կադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ,
- Արմենակ Թեմուրյանը հանցագործությունը կատարելու պահին գտնվե՞լ է արդյոք անմեղ սունակ կամ սահմանափակ մեղսունակության վիճակում, ներկայումս մեղսունակ կամ սահմանա փակ մեղսունա՞կ է, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հաստա տությունում, և արդյոք այդ բուժումը հակացուցվա՞ծ չէ նրան,
- Արմենակ Թեմուրյանը վտանգավո՞ր է արդյոք հասարակության և շրջակա միջավայրի համար, թե՞ ոչ, նրա հոգեկան վիճակը խոչընդոտո՞ւմ է նրա մասնակցությանը քրեական գործու վարույթին (նախաքննությանը և դատաքննությանը), թե՞ ոչ:

4. Փորձագետին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքութ-յան ապահովման համար:

5. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախա-տեսված քրեական պատասխանատվության մասին:

**Ավագ քննիչ՝** [signature] **Լ.Բ. Պառավյան**